ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2023թվականի N 42

ԹԱՄԱՐԱԶ ԱԼԵՔՍԵՅԻ ԳԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ ՔՕ 627-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ, 64-րդ և 66-րդ հոդվածներով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերով, Լերմոնտովո համայնքի ավագանու 07.04.2023 թ-ի թիվ 11 որոշումով, թիվ 0113010 վարձակալության վկայականը, հիմք ընդունելով նախկին վարձակալ Թամարազ Ալեքսեյի Գազարյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տալ համաձայնություն Լերմոնտովո համայնքի Անտառաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 06-026-0102-0007 ծածկագրով 0,32հա երկրորդ կարգի "խոտհարք" գործառնական նշանակության 576 000 ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել նախկին վարձակալ Թամարազ Ալեքսեյի Գազարյանին:

2.Թամարազ Ալեքսեյի Գազարյանի հետ մեկամսյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2023թվականի N 43

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ "Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Լերմոնտովո համայնքի ավագանու 07/04/2023 թ-ի "Լերմոնտովո համայնքի ավագանու 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին" թիվ 10-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

2.Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2023 թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2023թվականի N 44

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով , 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Լոռու մարզի Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեի բ.10 խ.4 դ.1 հոդված 4729-ից համայնքի բնակիչ Վասիլի Ալեքսեեվիչ Կորոլյովին ցուցաբերել դրամական օգնություն 10000 /տասը հազար/ դրամի չափով՝ նորածին երեխայի խնամքի համար.

Ընդամենը՝ 10000/տասը հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ